# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարբերությունների բաժինը տեղեկացնում է, որ սույն թվականի փետրվարի 15-16-ը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակված պատվիրակությունը, որի կազմում էին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, այցելեց Ասորի Ուղղափառ Եկեղեցու գահակալ Նորին Սրբություն Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքին:

Երկօրյա հանդիպումների ընթացքում Հայոց Եկեղեցու պատվիրակները Նորին Սրբություն Իգնատիոս Զաքքա Ա Պատրիարքին են ներկայացրել Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի պատրաստակամությունը միջնորդ հանդիսանալու՝ Ասորի Ուղղափառ Եկեղեցու և Հնդիկ Մալաբար Եկեղեցիների միջև առաջացած խնդիրները լուծելու համար:

Առաջարկվել է նաև ստեղծել Արևելյան Հին Եկեղեցիների ներկայացուցիչներից բաղկացած մնայուն գործող մի հանձնաժողով՝ Եկեղեցիների ընտանիքին վերաբերող զանազան խնդիրների քննարկման և լուծումներ առաջարկելու նպատակով:

Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Նորին Սրբություն Իգնատիոս Զաքքան, ի պատիվ Հայ Եկեղեցու պատվիրակության, կազմակերպեց բարիգալստյան և ողջերթի ճաշկերույթներ:

Մայր Աթոռի պատվիրակներն այցելեցին նաև Դամասկոսի առաջնորդանիստ եկեղեցի: Նրանց պատվին փետրվարի 17-ին Դամասկոսի թեմի գավառական, քաղաքական և թաղական իշխանությունների կողմից տրվեց ճաշկերույթ, որին ներկա էր և Դամասկոսում ՀՀ հավատարմատար Յուրի Բաբախանյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ*